

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Ավանեսօվ Բ. Շ.** – Композиция тестовых заданий. Учебная книга, М., 2002г.
2. **Մելիքյան Հ. Ա.** – Համակարգչային թեստավորման թեստային առաջադրանքների մշակում, Ուսումնամեթոդական ծեղնարկ, Երևան, 2009թ.:

О ПРИНЦИПАХ И ЭТАПАХ РАЗРАБОТКИ ТЕСТОВЫХ ЗАДАНИЙ

Г. А. Меликян

В работе приведены основные принципы и этапы разработки тестовых заданий. Отмечено, что для любой учебной дисциплины, оптимальна та тестовая система, которая разработана соблюдением описанных принципов и процедур.

ABOUT PRINCIPLES AND DEVELOPMENT STAGES OF TEST TASKS

H. A. Meliqyan

The work presents the basic principles and stages of development of test items. It is noted as optimal test system, which provided for any academic discipline, the one which is developed by the observance of the described principles and procedures.

EXAMINATION-GSU ՀԱՍՏԱԿՐԳԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Հ. Ա. ՄԵԼԻՔՅԱՆ

Տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ,

ԻԴՏ ամբիոնի վարիչ

Ե. Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԻԴՏ ամբիոնի դասախոս

Վ. Կ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՄԻԴՏ 2-րդ կուրսի մագիստրանտ

Ռ. Լ. ՆԱՎՈՅԱՆ

Ա. Վ. ԿՈՈՅԱՆ

ՄԻԴՏ 1-ին կուրսի մագիստրանտներ

EXAMINATION-GSU-ն (E-համակարգ) համակարգչային թեստավորման համակարգ է, որը նախատեսված է ուսանողների՝ տվյալ ուսումնական առարկայից ստացած գիտելիքները քննության զանազան եղանակներով (ընթացիկ, կիսամյակային, ավարտական քննություններ, ստուգաքններ, ինքնաստուգման գործընթացներ) ստուգելու և գնահատելու համար:

Ե-համակարգը գործառում է համակարգչային թեստային առաջադրանքներից կազմված թեստերով, որոնք ձևավորվում են տվյալ առարկայի համար նա-

խապես մշակված և փորձաքննության ենթարկված բազայի առաջադրանքներով:

Ե-համակարգի տեխնիկական ապահովումը մեկ սերվերով և ո բաժանորդային համակարգիչներով հանդերձավորված տեղային հաշվողական ցանց է:

Ե-համակարգի ծրագրային ապահովումը բաղկացած է հետևյալ հիմնական ծրագրային նորություններից.

- Web-սերվերային ծրագրից,
- ցանցային աղմինհստրատորի բլոկից,
- բազայի ծևավորման և մուտքագրման բլոկից,
- թեստի ծևավորման և արտապատկերման բլոկից,
- թեստավորման ինտերակտիվ գործընթացի իրականացման և կառավարման բլոկից,
- թեստավորման արդյունքների գնահատման և հանրագումարային միավորի հաշվման բլոկից,
- գործընթացների գրանցման և թեստավորման վիճակագրական տվյալների հավաքման բլոկից,
- հաշվետվությունների ծևավորման և արտապատկերման բլոկից:

Ե-համակարգի շահագործման փաստաթղթերի համալիրը ներառում է երկու հիմնական փաստաթուղթ՝ EXAMINATION-GSU տեխնիկական նկարագրությունը և EXAMINATION-GSU օգտագործողի հրահանգը:

Թեստավորման գործընթացը տվյալ ուսանողի համար համարվում է սկսված, եթե համակարգի աղմինհստրատորից ստանալավ իր անձնական բանալին, ուսանողը արտապատկերված քննական ցուցակից ընտրում ու նշում է իր անուն, ազգանուն, հայրանունը և մուտքագրում է անձնական բանալին: Այդ գործողությունները ծիշտ կատարելուց հետո ուսանողի համակարգչի էկրանին արտապատկերվում է հանձնարարվող թեստը:

Թեստավորմանը մասնակցող յուրաքանչյուր ուսանողի տրվում է առանձին թեստ: Ընդ որում, առաջադրանքները տարբեր թեստերի մեջ չեն կրկնվում: Թեստերը ծևավորվում են բազայից՝ առաջադրանքների պատահական ընտրության եղանակով: Թեստի մեջ ներառված առաջադրանքը բազայում նշվում է որպես "օգտագործված" և այլ թեստերի ծևավորմանը չի մասնակցում: Կարող են մշակված լինել բարդության տարբեր աստիճանի (1,2,3,4,5) առաջադրանքներ: Թեստի մեջ ընդգրկված առաջադրանքների տիպերը և բարդության աստիճանները (կշռային գործակիցները) տրվում են թեստի նկարագրության մեջ (Նկար1):

Թեստի նկարագրություն՝ առաջադրանքների բազայի հետ միասին, մշակում է ուսումնական առարկայի պատասխանատու դասախոսը և, համապատասխան ամբիոնի կողմից հաստատվելուց հետո, հանձնվում է Ե-համակարգի աղմինհստրատորին՝ սերվերում մուտքագրելու համար:

Կշռային գործակիցները	1	2	3	4	5	Ընդամենը
Ընտրված առաջադրանքների քանակները ըստ կշռային գործակիցների	n_1	n_2	n_3	n_4	n_5	$N = \sum_{i=1}^5 n_i$
Ուսանողին վերաբերող միավորները	n_1	$2n_2$	$3n_3$	$4n_4$	$5n_5$	$M = \sum_{i=1}^5 i.n_i$

Նկար 1. Թեստի նկարագրությունը

Թեստը համակարգչի էկրանին արտապատկերվում է ամբողջությամբ՝ իր բոլոր N հատ առաջադրանքներով։ Յուրաքանչյուր առաջադրանք սկսվում է “Հարցի N...”, “Հարցի տիպը...”, “Միավորը...” պարամետրերով։

Ե-համակարգում իրականացված են առաջադրանքների հետևյալ 12 տիպերը [1].

1. Մեկ ճիշտ պատասխան ընտրելու առաջադրանք,
2. Մի քանի ճիշտ պատասխաններ ընտրելու առաջադրանք,
3. Համապատասխանության հաստատման առաջադրանք,
4. ճիշտ հաջորդականության հաստատման առաջադրանք,
5. Ուսնիքավորման (աճման կամ նվազման կարգով դասավորելու) առաջադրանք,
6. Մեկ բաց թողած բառով առաջադրանք,
7. Մի քանի բաց թողած բառերով առաջադրանք (բառերի լրացման կարգը կարևոր չէ),
8. Մի քանի բաց թողած բառերով առաջադրանք (բառերի լրացման կարգը կարևոր է),
9. Տեղադրման առաջադրանք,
10. Հաշվարկվող պատասխանով առաջադրանք,
11. Հաշվարկվող պատասխանով առաջադրանք՝ պատասխանի ընտրությամբ,
12. Ստուգիչ-ուսուցանող առաջադրանք։

Առաջադրանքների նշված տիպերը ընդգրկված են երկու ֆունկցիոնալ խմբերի մեջ։

- ընտրության առաջադրանքներ (NN 1,2,3,4,5,9,11,12), որոնց դեպքում առաջադրանքի տեքստի հետ միասին արտապատկերվում են նաև հնարավոր պատասխանների տարրերակները,
- լրացման առաջադրանքներ (NN 6,7,8,10), որոնց դեպքում պատասխանը մուտքագրվում է ստեղնաշարից։

Բնական է, որ ինչքան շատ են համակարգի կողմից իրականացվող առաջադրանքների տիպերը, այնքան թեստավորման պատասխանատու դասախոսի համար հեշտ է ստեղծել տարրեր բարդության և կառուցվածքի առաջադրանքներ՝ ելնելով տվյալ թեստավորման նպատակից։

Ճիշտ պատասխաններով թեստի բոլոր հարցերին, ուսանողը հավաքում է թեստավորման տվյալ նպատակին անհրաժեշտ գումարային ամենամեծ միավորը (20, 25, 100 և այլն)։ Եթե մի քանի տարրերակների ընտրության առաջադրանք կատարելիս ուսանողը չի ընտրում անհրաժեշտ բոլոր տարրերակները, ապա նրան վերագրվում է ընտրված տարրերակներին համապատասխան կոտորակային միավոր։ Վերջնական գումարային միավորը հաշվելիս ստացված կոտորակային թիվը կլորացվում է մինչև ամբողջը՝ ի օգուտ ուսանողի։

Ուսանողը թեստի առաջադրանքները կարող է կատարել ցանկացած հերթականությամբ, կարող է վերադառնալ արդեն կատարված առաջադրանքներին, նորից կատարել դրանք, փոխել պատասխանները և այլն։

Ուսանողը պետք է աշխատի թեստային առաջադրանքները կատարել քննությամբ հատկացված ժամանակահատվածում։

Վերջացնելով թեստային առաջադրանքների կատարումը՝ ուսանողը սեղմում է թեստի վերջում արտապատկերված “Տեսնել արդյունքները” կոճակը, որով արտապատկերվում է թեստավորման արդյունքների աղյուսակը:

“Տեսնել արդյունքները” կոճակը սեղմելուց հետո ուսանողը չի կարող վերադառնալ առաջադրանքները նորից կատարելու և պատասխանները շտկելու գործնթացին և դուրս է իրավիրվում քննականյակից:

Համակարգչային լսարանում (ցանցում) տվյալ պահին քննություն է հանձնում միայն մեկ խումբ, որի քննական ցուցակը և թեստային առաջադրանքները արդեն մուտքագրված են: Քննական ցուցակը ունի նկար 2-ում բերված տեսքը:

Ցուցակում ֆիքսվում է թեստի կատարման արդյունքում ուսանողի հավաքած միավորների ընդհանուր քանակը: Իսկ առանձին թեստային առաջադրանքներից ստացված միավորները, ինչպես նաև թեստը կատարելու սկզբնական և վերջնական ժամանակները ֆիքսվում են հատուկ գրանցման մասինում, որին կատարվող հղումը գրվում է քննական ցուցակում՝ տվյալ ուսանողի տողի վերջում («Գրանցման №»):

Ֆակուլտետ —————																									
Ամբիոն —————																									
Կուրս —————																									
Սռարկա —————																									
Դասախոս —————																									
Քննության թվականը —————																									
<table border="1" style="width: 100%; border-collapse: collapse;"> <thead> <tr> <th style="text-align: center; padding: 5px;">N</th> <th style="text-align: center; padding: 5px;">Ստուգման գոր. №</th> <th style="text-align: center; padding: 5px;">Ա. Ա. Յ.</th> <th style="text-align: center; padding: 5px;">Մտացած գումարային միավորը</th> <th style="text-align: center; padding: 5px;">Գրանցման №</th> </tr> </thead> <tbody> <tr><td> </td><td> </td><td> </td><td> </td><td> </td></tr> </tbody> </table>	N	Ստուգման գոր. №	Ա. Ա. Յ.	Մտացած գումարային միավորը	Գրանցման №																				
N	Ստուգման գոր. №	Ա. Ա. Յ.	Մտացած գումարային միավորը	Գրանցման №																					
Ֆակուլտետի դեկան																									

Նկար 2. Քննական ցուցակը

Գրանցման մասիվի յուրաքանչյուր տող նախատեսված է մեկ ուսանողի համար և ունի նկար 3-ում բերված տեսքը:

Գրանցման №	Թեստի առաջադրանք- ների հանարները բազայում	Ուսանողի տվյալ պատասխանները	Մտացած միավորները	Թեստի գումարային միավորը (Σ)	Թեստի վրա ծախսված ժամանակը									
					Ա ₁	Ա ₂	...	Ա _N	Մ ₁	Մ ₂	...	Մ _N	Ակիզբ	Վերջ

Նկար 3. Գրանցման մասիվի տողը

Գրանցման մասիվը նախատեսված է.

● թեստային առաջադրանքների որակի և բարդության աստիճանի, ինչպես նաև թեստավորման գործընթացի վերաբերյալ վիճակագրական տվյալներ հավաքելու,

● թեստավորման գործընթացի հետ կապված բողոքների ու վեճերի լուծման նպատակով օբյեկտիվ ինֆորմացիա տալու համար:

Գրանցման տողը ձևավորվում է ուսանողի պատասխաններին զուգընթաց: Ձևավորումը ավարտվում է ուսանողի կողմից “Տեսնել արդյունքները” կոճակը սեղմելով:

Բազայում գրանցելու համար թեստային առաջադրանքները ներկայացվում են հետևյալ ձևաչափով.


№	Առաջադրանք	Առաջադրանքի տիպը	Պատասխանի տարբերակները (եթե կան)	ճիշտ պատասխանը	Բայր
---	------------	---------------------	--	-------------------	------

Թեստային առաջադրանքների և քննական ցուցակի էլեկտրոնային տարբերակները մշակվում են հայերեն լեզվով, “Sylfaen Unicode” տառատեսակով:

Ե-համակարգի գործառության ընդհանրացված սխեման բերված է նկար 4-ում, որտեղ E, S, A տառերով նշված են “EXAMINATION”, “ՈՒՍԱՆՈՂ” և “ԱԴՄԻՆԻՍՏՐԱԾՈՐ” բառերը՝ համապատասխանաբար:

Անհրաժեշտ է նշել, որ Ե-համակարգը ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման համապիտանի համակարգ է և կարող է օգտագործվել ցանկացած նպատակի թեստավորման համար (ընթացիկ, կիսամյակային, ավարտական քննություններ, ստուգարքներ, ինքնաստուգման գործընթացներ և այլն): Դրա համար պետք է նախօրոք նշակել թեստավորման տվյալ նպատակին համապատասխանող առաջադրանքների բազան և թեստի ձևավորման հրահանգը: Կարելի է ձևավորել թեստեր թույլ, միջին մակարդակի, ուժեղ ուսանողների համար, մրցումների, օլիմպիադաների մասնակիցներին նախապատրաստելու համար և այլն: Ընդ որում, կարող են նշակել ցանկացած բարդության և քանակի առաջադրանքներ և ցանկացած կառուցվածքի թեստեր, որոնք բավարարում են Ե-համակարգի նկարագրված պահանջներին:

Ե-համակարգի տեխնիկական նկարագրության և օգտագործողի հրահանգի հետ կարելի է ծանոթանալ նաև <http://www.gsu.am> կայքում:



Նկար 4. EXAMINATION-GSU համակարգի գործառության ընդհանուրացված բլոկ - սխեման

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՄԵԼԻՔՅԱՆ Հ. Ա. – Համակարգչային թեստավորման թեստային առաջադրանքների մշակում, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2009թ.:

СТРУКТУРА, ФУНКЦИИ И ПРИНЦИПЫ ФУНКЦИОНИРОВАНИЯ СИСТЕМЫ EXAMINATION-GSU

Г. А. Меликян и др.

Работа посвящена описанию структуры, функций и принципов функционирования системы компьютерного тестирования знаний EXAMINATION-GSU, разработанной и внедренной в Гаварском государственном университете.

THE STRUCTURE, FUNCTIONS AND OPERATIONS' PRINCIPLES OF THE SYSTEM EXAMINATION-GSU

H. A. Meliqyan and other

The work is devoted to describe the structure, functions and principles of functioning of the computer-based testing knowledge EXAMINATION-GSU, developed and implemented in Gavar State University.

EXAMINATION-GSU ՀԱՄԱԿԱՐԳԻ ՑԱՆՑԱՅԻՆ ԱԴՄԻՆԻՍՏՐԱՑՈՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԱՅԹՆԵՐԸ

Վ. Կ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

**ՄիԴՏ 2-րդ կուրսի մագիստրանտ, ԳՊԴ «Համրության հետ կապերի և լրատվության»
բաժնի ծրագրավորող**

EXAMINATION-GSU-ն (Ե-համակարգ) համակարգչային թեստավորման համակարգ է, որը նախատեսված է ուսանողների՝ տվյալ ուսումնական առարկայից ստացած գիտելիքները քննության զանազան եղանակներով (ընթացիկ, կիսամյակային, ավարտական քննություններ, ստուգաքններ, ինքնաստուգման գործընթացներ) ստուգելու և գնահատելու համար:

Ե-համակարգի ծրագրային ապահովումը բաղկացած է հետևյալ հիմնական ծրագրային մոդուլներից.

- Web-սերվերային ծրագրից,
- ցանցային աղմինիստրատորի բլոկից,
- բազայի ծևավորման և մուտքագրման բլոկից,
- թեստի ձևավորման և արտապատկերման բլոկից,